մատացած, որ յարկարծական բախտի այցի են սպասում։ Հին աւերակները օրերով պեղում են որեւէ պղնձի դաշոյն, բրոնցէ ճրագ, երկաթի կասկարա, կաւէ աման եւ այլ իրեր գտնելու եւ դրանք ծախելով՝ ապրելու յուսով։ Նախնիքներից մնացած ամէն տեսակ կահ-կարասի արդէն ծախել-կերել են, նոյն իսկ դերեզմաններից դուրս բերած իրերը՝ իրանց պապերի դիակազարդերը։ Ամբողջ Հովտիկում, ո՛չ միայն բժիշկ, այլ նոյն իսկ դեղատուն եւ վիրաբոյժ չկայ. նախապետական սընընչիները ոչնչացել եւ արհեստը բանացնող չեն թողել. դաղանիքն ու արհեստը դերեզման են տարել, յաջորդներին առանց վիրաբոյժի թողել։

Բ.

Բայքուրդ կամ Սմբատաւան։

Մասսատ վտակը ձախից Մադէն առ-ը եւ աջից Գեօղ առուն ընդունելուց յետոյ անուանւում է Ճորոխ կամ Խելար Ճորոխ եւ ընթացքը փոխում է դէպի հիւսիսարեւմուտք։ Մադէն առ-ը բղխում է Կրմբղը լ-ից, հոսում է դէպի հիւսիս, ոռոգում է նախ Կիվ եւ ապա Մադէն դեղի հանդերը։ Սրանից քիչ ցած Ակբարա լ-ից լցնում է Զեփէ առ-ը, ոռոգում է Զեփէի եւ Մանուլի հանդերը եւ ձախից խառնուում է Ճորոխին։ Ակխով լեռ-